ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

N Ե- 01/336

«25» Դեկտեմբերի 2020թ

ՀՀ Լոռու մարզպետ
Պ-ն Ա. Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ղեկավարի 2020թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 40-Ա և 41-Ա որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Զորագետ համայնք, հասցե հ. Զորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2020 թվականի N 40-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Զորագետ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Զորագետ համայնքի 2021թվականի բյուջեն հաստատելու մասին» N 28-Ն որոշումը՝

Որոշում եմ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Զորագետ համայնքի 2021թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:

ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 25

հ. Զորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2020 թվականի N 41-Ա

ԱՐՏԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձորագետի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ Ձորագետ համայնքի 1 փողոց թիվ 80/2 հասցեում իրավախախտող Արտիկ Հակոբյանի կողմից ապօրինի տիրապետած համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ.Արտիկ Հակոբյանը խախտելով«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 152.2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, առանց համայնքի ղեկավարի թույլտվության ապօրինի տիրապետել է համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը (այսուհետ՝ պահեստի շենք), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հինսապատիկի չափով,
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 152.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Ձորագետի համայնքապետարանի վարչական հանձնաժողովը (այսուհետ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, որն անցկացվել է իրավախախտող Արտիկ Հակոբյանի բացակայությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Ձորագետ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը:

Ձորագետ համայնքի ղեկավարի 2020թվականի օգոստոսի 19-ի ապօրինի տիրապետած համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը ազատելու մասին թիվ N Ե-01/234, 2020թվականի սեպտեմբերի 11-ի N Ե-01/256 և 2020թվականի հոկտեմբերի 19-ի N Ե-01/291 գրությունները:

ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժնի 2020թվականի նոյեմբերի 13-ի թիվ 57/7-5692 գրությունը:

Վարչական հանձնաժողովի 2020թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 01 արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը. Արտիկ Հակոբյանի կողմից Ձորագետ համայնքի 1 փողոցի թիվ 80/2 հասցեում առանց համապատասխան թույլտվության՝ ապօրինի տիրապետած համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը , առանց համապատասխան փաստաթղթերի, ուստի քննարկվող անշարժ գույքը հանդիսանում է ապօրինի տիրապետած:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2020 թվականի դեկտեմբերի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Ձորագետի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2020 թվականի դեկտեմբերի 24-ին հրավիրվել է վարչական նիստ, որին մասնակցելու նպատակով Արտիկ Հակոբյանը պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 2020թվականի դեկտեմբերի 16-ի փոստային անդորրագիր/ RG028712933AM/,սակայն չի ներկայացել

հանձնաժողովի նիստին: Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել՝ իրավախախտող Արտիկ Հակոբյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով՝ 50000 / հիսուն հազար/ ՀՀ դրամ, առանց համապատասխան թույլտվության համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը համարել ապօրինի տիրապետած:

Նախազգուշացնել Արտիկ Հակոբյանին , որ համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո, տասնհինգ օրյա ժամկետում ազատել համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը,օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 152.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելը

- առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով,«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 152.2-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «Ձորագետի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 2020թվականի դեկտեմբերի 24-ի. թիվ 01 արձանագրությունը

Որոշում եմ

1. Իրավախախտող Արտիկ Հակոբյանի նկատմամբ նշանակել տուգանք Ձորագետ համայնքի 1փողոցի թիվ 80/2 հասցեում համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը ապօրինի տիրապետելու համար, 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

1.1 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Ձորագետ համայնքի բյուջեի 900235421188 հաշվեհամարին:

2. Իրավախախտող Արտիկ Հակոբյանին տալ պարտադիր ցուցում՝ օրենքով սահմանված կարգով տասնհինգ օրյա ժամկետում վերացնել վարչական իրավախախտման հետևանքները:

3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և «ՀՀ Վարչական դատավարության» օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ/ համայնքապետարանի ցուցատախտակին հրատարակելու միջոցով:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 25

ք. Ձորագետ